«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

27.03.2018թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Արթուր Նալբանդյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն Նալբանդյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը դեռևս 11.01.2018թ. Լոռու մարզի խմելու ջրի մատակարարման, դրա որակի վերաբերյալ հարցում էր ուղարկել մարզպետարան: Պատասխանը ստացվել էր 16.01.2018թ., սակայն դրանում տեղ չէր գտել խմելու ջրի որակի 2017թ. 2-րդ կիսամյակի մոնիտորինգի արդյունքները՝ պատճառաբանությամբ, որ դրանք դեռ չեն ստացվել: Հաշվի առնելով, որ անցել է բավականին երկար ժամանակ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել՝

1. Խմելու ջրի որակի ***2017թ. 2-րդ կիսամյակի մոնիտորինգի արդյունքները*** նույն ձևաչափով, ինչպես տրվել էր 2016թ. 1-ին և 2-րդ կիսամյակների արդյունքները:
2. Նշել մարզի այն 36 համայնքների (30 բնակավայրերով) անունները, որոնք չեն օգտվում կենտրոնական ջրամատակարարման համակարգերից:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ *Գրիշա Բալասանյան*